

ՆՐԵՍՈՒՆԱԴԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հ Ր Ա Ք Ի Ր Ը

1903 թւին

12 ամսվանը	10 ռուբլի
11 »	»
10 »	9 »
9 »	8 »
8 »	»
7 »	6 »
6 »	»
Մնացածները ամսական	1 »

Խմբագրութիւնը 30 ֆր., Ամերիկայում 6 դոլլար,
Պարսկաստանում 10 ռ.
Հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

ՌԵԴԱԿՏԱՆԻ ԹԻՒՆ

Ուսանելի ճանապարհորդութիւններ.—Ներ-
քին ՏԵՍՈՒՅԻՆ. Ժողովրդական տնտեսական
ընթացքները. Նամակ Պետերբուրգից. Նամակ
Աստրախանից. Նամակ Սիմֆերոպոլից. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒՅԻՆ. Մակեդոնա-
կան հարցի չուրջը. Արտաքին լուրեր.—ՀԵՆՐԻ-
ԳԻՐԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱՅԱՆ.—Շարքէ շարքէ:

ՈՒՍԱՆԵԼԻ ԺԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մշակ» անցեալ համարում մենք դե-
տեղեցինք մի նկարագրութիւն այն ճանա-
պարհորդութեան, որ արել են Ներսիսեան
դպրոցի բարձր դասարանի աշակերտները
գէպի Սանահին և Հաղարատ Այդ ճանա-
պարհորդութիւնը ծանօթացրել է պատա-
նիներին մեր երկրի մի փոքրիկ կտորի
հետ, գիւղի, գիւղական կեանքի, գեղջ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՐՔԷ-ՇԱՐԱՔ

Նրեկոյեան ժամի 9 կը լինէր, երբ սենեակի
մտաւ էջմիածնի Վերդի կուրսի միտքան,
չառ բան խոտապոցով, շատ յոյսեր տուող, ձե-
մարանի լրել ընթացաւոր երիտասարդ ա-
բեղայ հայր Բառնաբաւը:

—Մի ժամ առաջ ժամանցի Մայր-Աթո-
նէն, Թիֆլիս կողմէի գնալ, սակայն մարդա-
տար գնացքէն ուշացել էի. սրբազան պարտքս
համարելի այցի գալ ձեզ:

Հայր աբեղայի լեզուն կրում էր իր վրա
Թիւրքիայի բարբառի հետքերը, չը նայելով
որ նա Աբարանի թէ՛ Նոր-Բայազէտի գիւղերից
մէկիցն էր:

—Ի՞նչ նորութիւն ունէք, հայր Բառնաբաւ,
հարցրի ես:

—Նորութիւն. չառ, ինչքան կուզէք:
—Այսինքն:

—Նայ՛ աւետելու եմ, որ երէկ իսկ մամ-
լոյ տակէն լոյս տեսաւ Մայր Աթոռի բե-
րամ «Արարատին» յունկար համարը՝ կարի
հետաքրքիր բովանդակութեամբ. ողջ տետրակը
գրեթէ լեցված է մեր բարձրագոյն դասակարգի
լիսենսիատ Կարապետ հայր-սուրբին կրօնա-
հազդիտական պատմա-հրապարակագրական
խիստ շահագրգիռ զերթուածներով:

—Սակայն ինչու է յունկարի Նե-ը այսքան
ուշ լոյս տեսնում—չուտով ապրիլ կը մտնենք:

—Ուշ, ինչու է ուշ, ինչ կը կարծէք թէ
հեշտ բան է կրօնական ամսագիր խմբագրե-
լան յօդուածներ, որոնք առանց ներշնչման
չեն գրվիր, իսկ այդ բանի համար տարիներն
իսկ քիչ են. և ապա մի մոռանա՞ք, որ «Արա-

կական արհեստի, բնութեան տեսարան-
ների, անցեալի խոշոր և շքեղ յիշատա-
կարանների, հանքային արդիւնաբերու-
թեան և առհասարակ զաւառական պատ-
կերների հետ: Եւ ճանապարհորդութիւնը,
լինելով ուսանելի և հետաքրքրական, գոր-
ծել է թարմացնող տպաւորութիւն ու
հրահանգիչ ազդեցութիւն պատանիների
վրա:

Այդպիսի ճանապարհորդութիւններն ու-
նեն կրթական մեծ նշանակութիւն և մենք
մի քանի անգամ խօսել ենք նրանց կարե-
ւորութեան մասին և առաջարկել հոգ
տանելու նրանց խելացի կազմակերպու-
թեան մասին:

Այն ճանապարհորդութիւնը, որ արել
են Ներսիսեան դպրոցի աշակերտները,
տեղի է ունեցել իբրեւ մի գէպը, իբրեւ մի
փորձ: Նա տեղ է շատ կարճ միջոց
և կրել է խելացի զուարճութեան բնաւո-
րութիւն: Իսկ մենք կը ցանկայինք, որ
այդպիսի ճանապարհորդութիւնները դառ-
նային կանօն և կատարելին որոշ սխառ-
մով և այն էլ ոչ միայն Ներսիսեան դպ-
րոցում, այլ և ուրիշ դպրոցներում: Այն
ժամանակ հարկաւոր կը լինի այդպիսի
զբօսանքների համար ծրագրերի մշակել
և նրանց, հմուտ ղեկավարների ձեռքով, ու-
սանելի դարձնել ամեն կողմից:

Մեր դպրոցական կրթութիւնը ընդհա-
նապէս տեսական է և վերացական: Աշա-
կերտները, հեռու լինելով բնութեան և
մարդկանց հետ շփումներ ունենալուց,
չեն ընտելանում գործնական գիտողու-
թիւնների անելուն, կեանքի փաստերը և
երեւոյթները ըմբռնելուն և նրանց դարձ-
նելու հետաքրքրութեան և մտածողու-
թեան նիւթ իրանց համար: Ծանապար-
հորդութիւնները կարող կը լինէին որոշ
չափով նպաստել, որ պատանի հոգիները,
ապագայ գործունէութեան համար չա-
րասովոր քաղաքացիները, սովորէին տպա-

րատին մէջ եղած իւրաքանչիւր բառն ստու-
գարանութիւն, բազում վկայաբանութիւններ
կը պահանջէ. բացի դա երեք ամսում ամառ-
գրին Նե-ը բաժանորդներին հասցնել ենք
կտրողանում:

—Ի՞նչ, միթէ մի ամսում Նե-ը բաժա-
նորդներին չեն հաճում:

—Ոչ, ինչ կասէք. դա հեշտ գործ է. պէտք
է գնալ ամեն մի քաղաք, փնտռել բաժանորդ-
ներին, անձամբ իրանց տալ ամսագիրը:

—Ինչպէս. միթէ պատուով չէք ուղարկում
«Արարատը»:

—Ի՞նչ կասէք, միթէ այժմեան ժամանակ-
ներս այդպիսի բան կարելի է պատին վստա-
հել. զաւ լրից Այդ բանի համար Մայր-Աթո-
նէ յատուկ գործակալներ ունի, որոնք «Արա-
րատին» համարները ցրվելու համար ճանապար-
հորդութեան կեննեն. ինչպէս գիտէք, գիւղա-
կան քահանաների համար ամսագիրս պարտա-
ւորեցողից չէ. կը մնան քաղաքները և ահա
մենք կը մտնենք քաղաքից քաղաք և մէկիկ
մէկիկ անձամբ կը ցրվենք «Արարատին» Նե-ը
բաժանորդներին. դա այն յարմարութիւնն ևս
ունի, որ մենք անձամբ կը ծանօթանանք մեր
քահանայ բաժանորդների հետ, կը չփվենք,
կուսումնասիրենք նրանց ճաշակները, ինչ ուղ-
ղութեան նրանց պատկանած լինելը, նիստ ու
կացը և այլ պարագայի և ըստ այնմ կը տանք
նրան «Արարատը». կայ քահանայ, որին մէկ
համար տալը նոյն իսկ վիրաւորական է, այդ-
պիսիին կը տանք 3, 4, 6 համար «Արարատ»
ցրվելու իր հօտի մէջ. կան սակայն այնպիսի-
ները, որոնց ոչ միայն չէ կարելի «Արարատ»
վստահել, այլ կարիք կայ նրանց ունենալ ըռ-
լոր Նե-ը խել և այլն և այլն. Եւ այսպէս,
ինչպէս կը տեսնէք, «Արարատ» գործը շատ
հաստատ հիմունքների վրա է դրված:

Բառնաբաւ աբեղայի տրամաբանութիւնը
այնքան զօրեղ էր, որ քիչ մնաց եւ էլ համոզ-
ւորութիւններ ստանալ կեանքից, ուշադիր
լինել գէպի շրջապատող կեանքի մէջ երե-
ւան եկող կարիքները, քննողաբար վերա-
բերվել գէպի կեանքի խնդիրները և չընկճ-
վել իրականութեան անսպասելի պատա-
հարներէն:
Թէ՛ արեւմտեան եւրօպական երկիրների
և թէ՛ Ռուսաստանի ու նաեւ մեր կողմա-
սեան կենցաղի ու գրականութեան ու-
սումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ մեծ
չարիքներ են առաջանում այն երկրում,
որտեղ ժողովրդի և նրա ինտելիգենտ մա-
սի մէջ կտրվում է կապը, որտեղ մարդը
անջատվում է իր հողից, որտեղ մտաւոր
մշակը չէ ճանաչում իր ապրած երկրի
պահանջները և կարիքները:
Անկասկած ճանապարհորդութիւնները
միայն մի փոքրիկ մասնիկ են այն ընդար-
ձակ գործունէութեան, որ անհրաժեշտ է
երկրի կապելու իր մտաւոր գործողների
հետ, բայց նրանք, իբրեւ կրթական միջոց-
ներ, շատ օգնական են, և ցանկալի է,
որ մեր դպրոցական վարչութիւնները
նայէին նրանց խելացի և կանօնաւոր կազ-
մակերպութեան վրա արժանաւոր լըծու-
թեամբ և ուշիմութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՅԻՆ

ԺՈՂՈՎՐԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տօնակատարութիւնները երկու ծայրայեղ
բնաւորութիւն են կրում հայ հասարակութեան
չըմաններում: Որքան այս տօնակատարութիւն-
ները կամ ճիշտ՝ այդ ծիսակատարութիւնները
քննութեամբ և փորձամտութեամբ են անցնում
քաղաքներում, նոյնքան աղքատիկ են տեղի
ունենում գիւղերում: Աւելորդ չի լինի համե-
մատութիւններ բերելը:

Նոր տարի է:

Քաղաքներում մարդիկ օր առաջ պատրաս-
տվում են միմեանց շնորհուրդներին,

վէի այս նոր միջոցի նպատակայարմարութեան
մէջ:

—Իսկ ինչ նոր բան կայ «Արարատին» մէջ,
հայր Բառնաբաւ:

—Սարսափելի լուրեր, գիտէք, և այստեղ
հայր Բառնաբաւ իր ձայնը ցածացրեց և
գէպը ընդունեց խիստ դառն արտայայտու-
թիւն.—գիտէք, Մայր Աթոռին մէջ, Պօլսէն
ստացած մամուլում նամակներին նայելով, ա-
մենապատիւ Մարգարիտ պատրիարքի վրա մի
հայ պատանի սպանութեան փորձ է կատարել:
—Երբ:

—Այս քանի օրերս—Միտքեան տօնի օրը—
պատասխանեց հայր Բառնաբաւը, աչքերը չու-
րով վրաս:

—Եւ քահանայ ծիծաղեցի:

—Եւ այդ ձեռ «Արարատին» բերած նորու-
թիւններից մէկն է. մենք երեք ամիս առաջ
գիտենք այդ:

—Ինչու կը խնդաք. միթէ կարելի է հաւատ
ընծայել լրագիրների մէջ գրվածներին, կամ
օտար աղբիւրներէն ըզլած և հեռագրիւններում—
մենք իւրաքանչիւր լուր ճշտում ենք, ունենք
մասնաւոր նամակներ:

—Յետոյ ինչ նոր բան կայ:

—Յետոյ... այստեղ հայր Բառնաբաւը աչ-
քերը դրեց առաստաղին և փոքր ինչ մտածե-
լուց յետոյ ասաց.

—Կասեմ, միայն չը վիրաւորվէք. այդ Նե-ը
մենք ամեն մարդի չենք տալիս կարգաւոր.
դա միայն մերայինների համար է գրված,—
ասաց կարմրելով հայր-Բառնաբաւը.

—Ի՞նչ:

—Լաւ, որ ստիպում էք կասեմ, միայն կա-
ղաքեմ չը սրտնեղվէք. «Մշակին» հայտնած է.
Կարապետ հայր սուրբը Արծրունուն ևս խա-
նած է:

—Ինչու, ինչ պատճառով:

—Պատճառը, ճիշտն ասած, չնչին բան է.

այցելութիւններ անելու, միմեանց հանդիպելու
ուրախ, զուարթ, ժպտաւոր զնորհաւորու-
թիւններ քերաններին, ի նորանոր յոյսերով,
իղձերով մանելով նոր-տարում: Մի խօսքով
զուարճութիւնը իր գագաթնակէտին հասած...
Իսկ ինչ է կատարվում գիւղերում նոյն առիթով
Ոչինչ. Նոր-տարին գիւղական ժողովրդի համար
չէ բերում ոչ մի զուարճութիւն, կեանքի ոչ
մի փոփոխութիւն: Դարձեալ նոյն գիւղական
տունը, նոյն գետնափոր խրճիթը, նոյն գլու-
սին ու թոնիլը, որտեղ, ինչպէս սովորական
օրերում, վառում է գեղջկուհին իր ձեռքի չոր
հացը թխելու համար, նոյն ոտաբորիկ, մերկ-
անդամ երկխաները ու նոյն ծխակալած-կեղ-
տոտած գրութիւնը... Տարեմուտը, դժբաղդա-
բար, ոչ մի արտասովոր երեւոյթ չէ ներկայաց-
նում գիւղի ժողովրդի համար...

Ջրօրհնէք է գալիս:

Գրիստոսի ծննդեան և մկրտութեան մեծա-
հանդէս տօնն է կատարվում, մեծ քաղաքնե-
րում շքեղ հանդէսով և մեծ զուարճութեամբ՝
տաճնեակ հազարաւոր մարդիկ դուրս են գալիս
Յիսուս Գրիստոսի մկրտութիւնը կատարելու.
Ժողովրդի շարքերը եռուն բերկրութեամբ լցված՝
միմեանց հրում են գէպի մկրտութեան հան-
դիսավայրը, երաժշտութիւնը իր մեղօղիա-
կան ձայնի քաղցրութեամբ հնչում է օրվայ
պատչածի համաձայն, թնդանթները իրանց
սղմկալի զրմիրենով աւետում են մարդկանց
Մեծ Ուսուցչի մկրտութեան տօնակատարու-
թեան մասին և բոլորը լցվում են զուարճու-
թեամբ: Իսկ ինչ է անում գիւղական խեղճ
ամբոխը.—նա սովորական կերպով փաթաթված
իր լաթերի մէջ՝ զլխակոթ վազում է գիւղական
անշուք եկեղեցին, որտեղ ամեն օր մոմ է վա-
ռում սրբերի առաջ և որտեղից միայն ուղում
է գտնել իր դառն կեանքի, իր չարչարանքի
փրկութիւն: Անա այդտեղ, գիւղի եկեղեցում,
մի զգոյնեալ տաշտին մէջ մկրտում են Յիսուս
Գրիստոսի խաչը Ահա գիւղական քահանան,
վեր առնելով փոքրիկ արծաթեայ խաչը և
ընկղմելով տաշտի ջրի մէջ՝ դառնում է հանդի-

Բանանց գիւղում մի հայ քահանայ հոտարձա-
կութիւն ունեցած է ճրագաւոյցին գիշերը յի-
շել Արծրունու անտէրը ճիշտ այն ժամանակ, երբ
«Սուրհուրդ Մեծ և քահանայի» երգով պէտք է
թնդային եկեղեցու կամարները, կառն հայր
Կարապետ Բայց իմ կարծիքով այդ առիթ չէ,
որովհետեւ նոյն այդ գիշերը նոյն իսկ էջմիած-
նի Մայր տաճարի կամարները չը թնդացին,
որովհետեւ մեղքի, անձկութեան, ցաւաց ճանձնի
մէջ գտնվող իրաքանչիւր խիստ մի վախա-
յինք բարձրաձայն այդ երգը երգելուց.—երկիւղ
կրելով չը լինի թէ մեր ձայնը լսէին հեշտակ-
ները և հրաշալի մանուկը դար, ինչէր մեր
մէջ մեղինց հաչիւ պահանջներ...

—Ապա ուրեմն ինչու կը մեղադրէք Բա-
նանցի խեղճ քահանային:

—Ասացի, որ դա լոկ մի առիթ էր, որ
գործը զրկեց միայն անոր համար, որպէս զի
չանքը «Մշակ» հակառակորդների տրամա-
դրութիւնը. այդպիսով «Արարատը» շատ բա-
ժանորդներ կը չափ... սակայն կաղապար այդ
լուրը չը տարածէ ձերայինների մէջ, դա, նո-
րից կը կրկնեմ, մերայիններին հաճելի լինելու
համար է, որ Կարապետ հայր սուրբն տպած
է իր յօդուածում:

—Ուրիշ ոչինչ չը կայ «Արարատին» մէջ:

—Ներայայ, այլ ևս ինչ կուզես, զայրացաւ
հայր Բառնաբաւը.—միթէ այսքանը մի Նե-ին
մէջ չի բաւեր: Մի քանի ամից լոյս կը տես-
նի «Արարատին» վետրովարի համարը. այդ
տետրակին համար Մայր Աթոռում մեծ պատ-
րաստութիւն կը տեսնեն... պաշտօնավոր վար-
դապետ... հրաժարական... սիրագրաւ վէպ...
և այլն. սակայն ես յոգնած եմ—կերպարան
Ասաց հայր Բառնաբաւը և վերկացաւ տե-
ղից, դրեց գլխին կամիւրակն, նայեց իրան
հայելու մէջ, շտկեց մագերը և, մեկնելով ինձ
իր ձեռքը, դուրս եկաւ. սենեակիցս:
—Հա, այժմ միտքս եկաւ.—դուք լսել էք իմ—

լոր կալանաւորներին Ամբոխի միջից գցված մի քան դիպակ չըջնի կառավարչի ձեռքին, միւսը Փօթիի գնդի մի պօրուչիկի պարանոցին, իսկ մի ուստիկան սաստիկ ծեծվեց: Վրա հասած զօրախումբը ցրվեց ամբոխին: Բանտի մէջ եղած կալանաւորներին փախան միայն 8 հոգի, ոչ նշանաւոր յանցարարներին: Բժիշկները ձեռքով Սվինսոտրիզին մարմինը անդամատելուց երեւց, որ նրա մարմնը առաջացել է այն ծեծից, որ նրան ենթարկել են ձերբակալելու ժամանակ, իսկ ալիօսից թունաւոր ման հետքեր չը գտնվեցին: Յանցարար ուստիկանները կենթարկվին դատի: Իսկ ինչ վերաբերում է գաւառաւոր գլխաւորին, որի իշխանութեան տակ գտնվում է բանտը, ինչպէս նաև Սվինսոտրիզինի դիակը զննող չըջնալին բժիշկի յանցարարութեան աստիճանին, այդ բանը կորույժի այն դատական քննութեանց յետոյ, որ կատարվում է այժմ Եկատերինսկոյի նահանգական դատարանի պրոկուրորի անձնական մասնակցութեամբ: Իսկ մինչ այդ ժամանակ յիշված պատմութեամբ անձինք հետաքրքրված են իրանց պաշտօններին: Պատասխանաւորութեան կենթարկվին նաև այն յանցարարներն, ամբոխի միջից, որոնք թող են տուել իրանց անկարգութիւններ գործել և ինքնակամ կարգադրութիւններ անելու:

Ներկայումս Թիֆլիսի պատմական թանգարանում պատրաստութիւններ են տեսնվում բանալու Չառնիկի յետոյ պատերազմական, որը տեղի կունենայ ապրիլի 10-ին Պատկերահանդէսում կը լինեն կովկասեան նկարիչների ստեղծագործութիւնները: Պատկերների թիւը կը լինի մօտ 200:

Մեզ հաղորդում են, որ Կովկասից մի քանի գիւղացիներ ուղարկում են իրանց մրգերը Պետերբուրգի ցուցահանդէսը, որ պէտք է լացվի ներկայ ամսի վերջին թւերում Պետերբուրգում: Մրգեր ուղարկում են Հաջի Իսմայիլ Օղլի, Գիօ Խանգանազով և ուրիշներ:

Ներկայ գտնական տօներին աղքատներին բաժանելու համար ստացանք Բրախից, մի տիկնոջից, 5 ռուբլի, Բագուից, Հ. Մուշկամբարեանից՝ 3 ռուբլի:

Զինահաւելից և անձրևների ջրերից յորդացած Կուր գետը սկսել է բարձրանալ և մասամբ հեղեղել է Թիֆլիսի Աղաջ քաղաքամասը: Քաղաքագլուխ իշխան Ն. Վ. Արդու-թեան-Սրկախանազովի ապրիլի 2-ին այցելեց այդ քաղաքամասը՝ ծանօթանալու համար այն միջոցների հետ, որ քաղաքային վարչութիւնը ձեռք է առել ազատելու համար այդ թաղի բնակիչներին և նրանց գոյքերը Կուրի հեղեղման դէպքում:

Ապրիլի 4-ին քաղաքային կենտրոնական բուժարանում կը կատարվի հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ Կայսր Ալեքսանդր II-ի համար: Այդ օրը, ինչպէս և ապրիլի 6-ին և 7-ին, հիւանդների ընդունելութիւն չի լինի. ընդունելութիւնը կը սկսվի ապրիլի 8-ից:

Գաւառաւորական սահմանափակումների պատճառով գիւմրացիների դասընթացն աւարտող հիշանքի մի մասը միայն մտնում է Բարձրագոյն դպրոցները, իսկ մնացածները ստիպված են լինում երկար սպասել իրանց հերթին կամ բողոքովին հրաժարվել համալսարանի մտնելու ամբից: Այդ պատճառով վարչական հիշանքի մէջ միտք ծագեց կազմակերպել ապահովագրութեան մի առանձին ընկերութիւն բարձրագոյն դպրոցները չը մտնողների համար: Իւրաքանչիւր հիշայ աշակերտ, գիւմրացիները սովորելու ժամանակ, պէտք է վճարէ տարեկան հինգ ռուբլի: Այդ կերպ հաւաքված գրաւարկից նպաստներ կը տրվին բարձրագոյն դպրոցները չընդունված աշակերտներին արտասահման գալու համար ուսումը ներքին անելու, ինքիւստօրոյն դիմեցին հիշանքի մէջ լուսաւորութիւն տարածող Պետերբուրգի ընկերութեանը, խնդրելով միջնորդել, որպէս ի թոյլաւորութիւն ստացվի հիմնելու վարչակալական նախագիծով ընկերութիւնը:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Անա մի չաբաթ է, ինչ Կովկասեան ուսումնարանական չըջնի հաշտարարութիւն օգնական Սվիլիցկին այցելեց մեր քաղաքի միակ միջնակարգ դպրոցական դպրոցը: Հաշտարարութիւն օգնականը այցելեց նոյնպէս օրինորդական Մարիինսկի ուսումնարանը:

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՎԻՍՏԻՑ մեզ գրում են. «Մարտի 22-ին, Գրիգոր Լուսաւորչի տօնի առիթով, տեղիս հայոց ծխական դպրոցում մի համեստ հանդէս կատարվեց, որին ներկայ էին թեմին արքայան առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսը և երկուսն իսկոն հասարակութիւնը: Հանդէսի սկզբում ուսուցիչ Նունեանցը խօսեց համառօտ կերպով սկզբնական ուսումնարանների նշանակութեան մասին յետոյ աշակերտները ու աշակերտուհիները երգեցին, և հայերէն ու ռուսերէն ոտանաւորներ ասեցին վերջում. մի աշակերտուհի պատմեց Գրիգոր Լուսաւորչի պատմութիւնը: Հանդէսը վերջանալուց յետոյ աշակերտներին քաղաքաւանիք բաժանվեց: Սերբազան առաջնորդը գոհ արտով շնորհակալութիւն յայտնեց պ. հաշտարարութեան և ուսուցիչներին: Բոլորը ուրախ արամաղութեան տակ ցրվեցին:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մի չաբաթից աւելի էր, ինչ դարնան բուրմունքը մոռացել տուեց ձմեռային դաժան օրերը, շնորհիւ տաք և պայծառ օրերի, բայց միջոցը կարճ էր: Դրսում կանգնած է խիստ մոռախուղ, անպատճառ կերկնք, մարում է անձրև, երեւի պակասն էլ նորից ձիւնը կը լրացնէ:

ԵՎՊԱՏՈՐԻԱՅԻՑ մեզ գրում են. «Մարտի 21-ին անյայտ չարագործները կողպտեցին տեղիս հայոց եկեղեցին: Գողացված են մի սաղաւարտ փակա (հանգուցեալ Յակոբ աղա Սեֆորեանի ժառանգները նուիրած էին իրանց հօրը յիշատակին), երկու քոյր, չորս հատ խաչ, բուրվառ, աղանի, բոլորն էլ արծաթեայ, և մօտ 80 ռուբլի փող: Բոլոր վնասը մօտաւորապէս հաշոււ են 1200 ռուբլի: Ինչպէս երեւում է, գողերը անպատճառ տեղացի պէտք է լինեն, որովհետև ամեն մի քայլը մտածված է և նրանք լաւ իմանալիս են ինչի, թէ եկեղեցու սպասները որտեղ են պահված: Գողերը ոչ մի հետք չեն թողել և մինչև այժմ չեն գտնված:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՅԻՆՈՒՆԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

Դեռ չեն հեռացել սև ու մութ ամպերը Մակեդոնիայի երկրքից: Դեռ չեն դադարել կոտորածներն ու արիւնահեղ ընդհարումները: Արդէն մի քանի ամիս է, որ ամբողջ երկիրը օրհասական միճակի մէջ է և այդ օրհասի ընթացքում աղաքանախութեան տարբեր ոյժերը հրապարակ են դուրս եկել իրանց ամբողջ թափով:

Այն, տարբեր-նոյն իսկ հակադիր ու թշուառական ոյժեր են դրանք: Աղաքանախութեան ամենամեծ մասը բաղադրեցին է բաղկացած, սակայն դրանք էլ մի ձուլված ոյժ չեն ներկայ յայտնում: Դրանց մի մասն ուղում է Մակեդոնիայից մի ինքնավար պետութիւն ստեղծել, իսկ շատերն էլ ցանկանում են նրան միացնել բաղադրական իշխանութեան հետ: Դրանք բաղադրների տեսիլներն են:

Բայց Մակեդոնիայում բացի բաղադրներից ապրում են նաև բազմաթիւ յոյներ ու սերբեր: Իրանց տարբեր պահանջներով ու ձգտումներով Յոյներն ուղում են Մակեդոնիան միացնել Յունաստանի հետ, սերբերը՝ Սերբիայի հետ, իսկ աւելի չափաւորները առաջարկում են այդ երկիրը երեք բաժին անել: Բաղադրային, Յունաստանի և Սերբիայի մէջ:

Աւելացրէք այդ բոլորի վրա Թիւրքիայի ձեռք առած ընդիմացները և Ռուսաստանի ու Աւստրիայի եռանդուն ջանքերը բարենորոգումներ մտցնելու համար և այն ժամանակ կը ստանաք մի բարդ գնահատած, որի անունն է՝ ամակեդոնական հարցը:

Հէնց որ գորեղանում է այդ գնահատածի մի որ և է տարբեր, միւսները հակառակ դիրք են բռնում և արգելք դառնալ են աշխատում: Այսպէս, օրինակ, յոյներն ու սերբերը, տեսնելով բաղադրների յեղափոխական շարժման ուժեղանալը, թշնամական ցոյցեր սկսեցին նրանց դէմ և իրանց չօլինիզմն այն աստիճանի հասցրին, որ համակրութիւն ու նոյն իսկ աշակերտութիւն արտայայտեցին դէպի ընդհանուր թշնամի-Թիւրքիան:

Այդ էր պատճառը, որ բաղադր հրոսակախները մահվան պատժի արժանացրին սերբ քահանաներից և ուսուցիչներից չառերին: Դրանով պէտք է բացատրել այն քստմեղի իրողութիւնը, որ յոյն ուսանողները սովորան Համիդի խնդիրը ներկայացրին, որպէս զի նրա զօրքերի հետ միասին բաղադրների դէմ կռուին:

Յունաստանը այժմ էլ քաղցր ժպիտներ է ցոյց տալիս թիւրք կառավարութեանը: Պարզ է, որ այդպիսի անհամարաչափութիւնն ու երկպառակութիւնը քայքայում—ջլատում է քրիստոնէայ աղաքանախութեան ոյժերը և մեծ հարուած է հասցնում ընդհանուր գործին: Իսկ թիւրք կառավարութիւնը օգտվում է այդպիսի նպաստաւոր հանգամանքներից գրութիւնն աւելի բարդացնելու և մակեդոնական հարցի լուծումն աւելի դժուարացնելու համար:

Բայց դա հին ցաւ է, տարիների ընթացքում պարբերաբար կրկնվող մի ցաւ, որ արտայայտվել է ոչ միայն իրական կեանքում, այլ և գրականութեան էջերում:

Թերթեղէ յոյն ու բաղադր հեղինակները գրում են, որ այն ժամանակ կը տեսնէք, թէ որքան հակասական ու թշնամական տեղեկութիւններ կան դրանց մէջ: Յոյնն աշխատում է յոյների թիւն ու կողմնորակաւ աղաքանախութիւնը չափազանցած ձևով պատկերացնել, իսկ բաղադր՝ բաղադրներին: Անա նմուշ-

Բաղադր հեղինակ Վ. Կոնչեյի հաշուով Մակեդոնիայում ապրում են.

1,181,336	բաղադր
499,204	թիւրք
224,700	յոյն
186,711	ալբանացի
80,767	վալախ
87,840	հրէայ
80,000 ուրիշ ազգութիւններ	

Այդպիսով դուրս է գալիս, որ Մակեդոնիայում յում գերակշռող տարրը բաղադրներն են:

Իսկ յոյն հեղինակ կոմս Կապիստը դուրս է բերում *), որ հարաւային Մակեդոնիայում աղաքանախութեան ամենամեծ մասը յոյներից է բաղկացած. հիւսիսային կազմակերպում էլ նրանք են աւելի մեծ թիւ կազմում, քան թէ ցոյց են տալիս բաղադր հեղինակները: Այդպիսով նրա կարծիքով բաղադրները ոչ մի իրաւունք չունեն ամբողջ Մակեդոնիային տիրանալու, մասնաւորապէս որ պատմական տեսակետից էլ Մակեդոնիան Յունաստանին է պատկանում: Այսպէս թէ այնպէս հակեդոնական հարցը, բացի արտաքին դժուարութիւններից, ունի նաև ներքին շատ բարդութիւններ, իսկ ներկայ քաղաքական միջնորդան ամբան մտալ է, այնքան անյուսալի, որ չի ուզեցնայ միանգամից վերացնել այդ դժուարութիւններն ու բարդութիւնները և հարցին ցանկալի լուծումն տալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինի «Post» լրագիրը փորձում է ապացուցանել, որ անգլիական մամուլը, Փրանսիականին հետ միացած, աշխատում է վրդովել հասարակական կարծիքը և յուզել եւրոպական պետութիւններին Մակեդոնիայում տեղի ունեցող անցքերի առիթով: Այդ ազդեցության մարտը նպատակն է—ասում է լրագիրը—պատերազմ առաջ բերել, որ Անգլիային գործունէութեան ազատութիւն տայ հետաւոր Արեւելքում: Նոյն լրագիրը աւելում, Ֆրանսիան ամեն կերպ աշխատում է խախտել այն համաձայնութիւնը, որ մակեդոնական գործերի վերաբերմամ կայ Գերմանիայի, Աւստրիայի և Ռուսաստանի մէջ:

—Միտրովցի ուսուցչ հիւպատոսի վերաւորման առաջին լուրը ստանալուց յետոյ՝ «Београдске Новине» լրագիր խմբագրութիւնը յանձնարարեց իր աշխատակիցներից մէկին տեղեկութիւններ ստանալ հիւպատոսի մասին: Ինչպարզի ձեռք ուսումնարանի պրօֆէսոր Դոկտոր Իովան Սվիլիցի, որ Եւրոպայի մօտ բարեկամն է, ձեռք չափազանց անհանգստացրեց Միտրովցիայից ստացված տխուր լուրը, —ասաց պրօֆէսորը: Եւրոպայում թէ իրեն հիւպատոս և թէ իրեն մարդ ամենահամակրելի մի անձնաւորութիւն էր: Երբ ինձ պատահում էր խօսակցել նրա հետ և երբ ես յետոյ յիշում էի նրան, իմ մէջ միշտ միտք էր ծագում, թէ այդ մարդը մեծ գեր է խաղացել ուսուցչ քաղաքականութեան մէջ: Եւրոպայում չափազանց լայն հայացքներին, հազուադէպ եռանդի տէր մարդ է և նուիրված է իր գործին հոգով ու արտով: Նա մի վերին աստիճանի նշանաւոր հիւպատոս է, որովհետև նա, բացի խելքից, ունի ջերմ գեղացիական և հաւատ դէպի իր գործը: Եւրոպայում դեռ ես երբեք չստացաւ է. նա մօտ 37 տարեկան է և լաւ խօսում է սերբերէն, գիտէ արաբերէն և թիւրքերէն: Նա շատ լաւ ծանօթ է Բալկանեան թերակղզու ազգութիւնների գրականութեան հետ: Վերջում սերբիացի պրօֆէսորը աւելացրեց, թէ ուսական ներկայացուցչի թափված արեւը կը ցնցէ Հին-Սերբիայի ժողովրդին և նա կապտամարմին թիւրքական ծանր լուծից իսպառ ազատվելու յուսով:

—«Berliner Tageblatt» լրագիր թղթակիցը հաղորդում է Հոսթին, թէ Վատիկանում սաս-

*) „Русская Мысль“ 1903 № 2.

տիկ զբաղված են էդուարդ թագաւորին ընդունելու պատրաստութիւններով: Այն միտքը, թէ անգլիական թագաւորը Հոսթին եղած ժամանակ կարող է և չայցելել Պապին, ծանր մտածմունքներ է պատճառում Վատիկանում: Լիսաբոնի պապական նուիրակ մօնէսեօր Ալուարի ամեն ջանք գործ է գնում, որպէս զի ազդէ էդուարդ թագաւորի վրա և համոզէ նրան այցելելու Պապին: Վատիկանում յոյս ունեն, որ նրա ջանքերը աշոգութեամբ կը պատկվեն և արդէն նախապատրաստութիւններ են տեսնում ընդունելու էդուարդ VII-ին:

—«Daily News» լրագիրը ասելով, Լոնդոնում յամառ լուրեր են տարածված, որ իբր թէ մի-նիստրութիւնը մօտ ժամանակներում պէտք է հրաժարական տայ վերջին ընտրութիւնների պատճառով: Վարելի է, —ասում է լրագիրը—այդ լուրերը չափազանցած են, բայց կասկածի չէ կարող ենթարկվել այն բանը, որ զի հաղթական կուսակցութեան վերջին երկու յաջողութիւնները ախարան հոգս են պատճառել կառավարութեան, որ նա շտապում է հաշտվել չորրորդ կուսակցութեան հետ, որի կազմութեան մասին արդէն յայտարարված է:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌՈՒԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐՈՍԿԱՎՈՒԹԻՒՆԻՑ
2 ապրիլի
ՄՕՍԿՎԱ. Նոյն Կայսերական Մեծութեանը բոլոր Օգոստոսփառ Երեւաններով ներկայ էին պատարագին Մննդեան եկեղեցում:
Կ. ՊՈԼԻՍ. Նաւահանգստային կառուցումները անստօրիական երկաթուղու վրա խայ-դար-փաշայում բացված են երթեկներու համար:

Շէյքերիայի հոգեհանգիստը կատարելու ժամանակ ուսուցչ դեպատնէթիւնը հրաւերեցին չուղարկեց թիւրքաց կառավարական անձները: Թիւրքաց ներկայացուցչներն եկան՝ առանց հրաւերների: Թիւրքաց զինուորական միւստաք այցելեց Զինովիէվին: ցաւակցութիւն յայտնելու համար:

Ճիշդ չէ այն տեղեկութիւնը, որ իբր թէ ուսուցչ դեպատն պահանջել է վարձարութիւն Շէյքերիայի սպանութեան համար: Թիւրքաց կառավարութեան կողմից տեղի ունեցաւ կարգադրութիւն՝ կախաղան բարձրացնել Շէյքերիայի սպանողին:

ԲԵՐԼԻՆ. «Norddeutsche Zeitung» հաղորդում է, որ կայսրուհին հարկադրված է, բժիշկներ խորհրդով, հրաժարվել դէպի Բուսլիա ճանապարհորդելու մասնակցութիւնից:

ՄՕՍԿՎԱ. Ապրիլի 1-ին Նոյն Կայսերական Մեծութիւնները գնացին տեսնելու Լուսինները: Ապրիլի 2-ին Նոյն Մեծութիւնները և Նոյն Բարձրութիւնները տեսան կրէմլեան պատերը: Նոյն Մեծութիւնները բարեկամ էին ժողովրդին:

ԲԵՐԼԻՆ. Բացված է իններորդ միջազգային կոնգրէսը ալիօսիզմի դէմ կուելու համար:
ՀՈՍՏ. Եօթներորդ գիւղացիական միջազգային կոնգրէսը քննում էր պետութիւնների համաձայնութեան հարցը: Գրիֆիթէնցեալ մաքսահարկ գործադրելու համար Ամերիկայի վերաբերմամբ: Ընդունվեց մի առաջարկութիւն, որով, հիմնաւորապէս ուսումնասիրելու համար, ամէրիկական մրցման վերաբերեալ հարցը պէտք է յետաձգվի մինչև մերձակալ կոնգրէսը:

ՎԻԵՆՆԱ. Ապրիլի 2-ից և Մոսկովա-Փաշայում ձերբակալված են այն բաղադրները, որոնք մասնակից էին երկաթուղիական կառավարչի օդը թողնելուն և արքունական նաւթապահեստը պայթեցնելուն Մոսկովա-Փաշայի մօտ:

3 ապրիլի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Правительственный Вестник» լրագրում տպված է. «Արտաքին գործերի միւստար Միտրովցիայի հիւպատոսի մահվան մասին Մալգովի հեռագիրը ամենահպատակօրէն զեկուցեց, որի վրա Նորին Մեծութիւնը բարեկամեց սեփական ձեռքով գծագրել. «Ես տ ցաւալի է Շէյքերիայի մահը: Նա ուր պէտք է հերոս, քաջութեամբ կատարելով իր պարտը»:

ԶԷՐԻՆԳՈՎ. Շէյքերիայի մարմինը Զերնիցով հասնելուց թաղումը կը կատարէ Ելեցիլի վանքում սրբազան Իսիօրը ամբողջ հոգեւորականութեան հետ միասին: Կառավարական հիմնարկութիւնները, օգնականութեան ներկայացուցիչները, քաղաքային վարչութիւնը, բոլոր վարչութիւնների, գաւառապետների և հիմնարկութիւնների ներկայացուցիչները և զբարոցները պատրաստվում են հանդիսաւոր դիմաւորմանը: Սպասում են եկողներին և ուրիշ նահանգներից:

ԱԺԻՐ. Ժամանեց նախագահ Լուբե:

ԲԵՐԼԻՆ. Ալեքսանդր թագաւորի թագաւոր-

